ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«11» փետրվար 2020թ. No 555 – Ա

«ՍՏՈՐԻՆ ՄԻԶՈՒՂԻՆԵՐԻ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԻ ԴԵՂՈՐԱՅՔԱՅԻՆ ԿՈՐԵԿՑԻԱ» ԹԵՄԱՅՈՎ ՍԵՄԻՆԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ. հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական ուրոլոգիական ասոցիացիայի նախագահ բ.գ.դ. պրոֆ. Սերգեյ Ֆանարջյանի 29.01.2020թ. հայտը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

Հաստատել՝

1. 2020 թվականի փետրվարի 22-ին ք. Երևանում Հայկական ուրոլոգիական ասոցիացիայի կողմից կազմակերպվող «Ստորին միզուղիների ախտանիշների դեղորայքային կորեկցիա» թեմայով սեմինարի ծրագիրը համաձայն Հավելված 1-ի:

2. «Ստորին միզուղիների ախտանիշների դեղորայքային կորեկցիա» թեմայով սեմինարի մասնակիցների վկայականները վավերացնել ՀՀ առողջապահության նախարարության կնիքով:

3. «Ստորին միզուղիների ախտանիշների դեղորայքային կորեկցիա» թեմայով սեմինարի մասնակիցներին շնորհել ՇՄՌ 2 տեսական կրեդիտ:

4. Վկայականները վավերացման ներկայացնելիս անհրաժեշտ է ներկայացնել նաև տեղեկատվություն մասնակիցների վերաբերյալ՝ համաձայն կից ձևաչափի (Հավելված 2):

5. Վկայականները անհրաժեշտ է ներկայացնել վավերացման միջոցառման անցկացումից հետո առավելագույնը մեկամսյա ժամկետում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանին:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ